

«Իրավաբան» փաստաբանական գրասենյակն աշխատանքի է հրավիրում քաղաքացիաիրավական և քրեական մասնագիտացում ունեցող փաստաբանների:

**Աշխատանքի տևողությունը:** Երկարաժամկետ՝ առավելագույնը 3 ամիս փորձաշրջանի սահմանմամբ:

**Աշխատանքի վայրը:** «Իրավաբան» փաստաբանական գրասենյակ (Երևան, Տերյան 91)

**Աշխատանքային պարտականությունները:** Հաճախորդներին նախնական խորհրդատվության տրամադրում, քրեական, քաղաքացիաիրավական բնույթի գործերով հայցադիմումների նախագծերի կազմում, քաղաքացիաիրավական պայմանագրերի նախագծերի կազմում, ներկայացուցչության ապահովում պետական մարմիններում, դատական ներկայացուցչության ապահովում:

**Անհրաժեշտ որակավորումներ:** Բարձրագույն իրավաբանական կրթություն, փաստաբանական արտոնագրի առկայություն, քրեական, քաղաքացիական և վարչական օրենսդրության իմացություն, համակարգչային հմտությունների իմացություն: Աշխատանքային փորձը, ինչպես նաև օտար լեզուների իմացությունը ցանկալի է:

**Աշխատավարձի չափը:** Պայմանագրային

**Հայտարարության վերջնաժամկետ:** 30.12.2018թ.

Աշխատանքային պայմանների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցազրույցին մասնակցելու համար անհրաժեշտ է զանգահարել 093996011: